ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԱՐԺԻՉՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ (ԱՊՊԱ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-21/14

«12» ապրիլ 2021թ.

ք. Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Դաղունցի (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման (ԱՊՊԱ) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 194 000 (հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, Վարդանանց 16
ՀՎՀՀ՝ 02629081	ՀՎՀՀ՝ 02574465
Հ/Հ՝ 900011018539	Հ/h 2470100507450000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ
ՖՆ գլխավոր քարտուղար՝	Գլխավոր տնօրեն՝
_____ Ա. Հարությունյան	_____ Ա. Դաղունց
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
12 ապրիլ 2021թ. կնքված
«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-21/14» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	քանակը	մատուցման ժամկետը
1	66511180/1	ՀՀ ֆինանսների նախարարությանը պատկանող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն SJ 379921 վկայագրին կից կնքված համաձայնագրի համար Ավտոմեքենաների քանակը՝ 4 հատ;	դրամ	194 000	1	Պայմանագրով ծագած հարաբերությունները տարածվում են. 01.01.2020թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև պարտադիր ապահովագրական վկայագրով նախատեսված ժամկետի ավարտը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

_____ Վ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
ՀՀ, Վարդանանց 16
ՀՎՀՀ՝ 02574465
Հ/հ 2470100507450000
Արդշինբանկ ՓԲԸ
Գլխավոր տնօրեն՝

_____ Ա. Դաղունց
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
12 ապրիլ 2021թ. կնքված
«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-21/14» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			մարտ	փետրվարի	հունվար	հոկտեմբեր	սեպտեմբեր	օգոստոս	հուլիս	հունիս	մայիս	ապրիլ	մարտ	Ընդամենը
1	66511180/1	շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայություններ				194 000	194 000	194 000	194 000	194 000	194 000	194 000	194 000	194 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

_____ Վ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
ՀՀ, Վարդանանց 16
ՀՎՀՀ՝ 02574465
Հ/հ 2470100507450000
Արդշինբանկ ՓԲԸ
Գլխավոր տնօրեն՝

_____ Վ. Դադունց
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 3
12 ապրիլ 2021թ. կնքված
«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-21/14» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ---------- 2020թ. դուրս գրված N ---------- հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
12 ապրիլ 2021թ. կնքված
«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-21/14» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ARMENIA INSURANCE	ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ	ԿԿԱՅԱԳՐԻ N 5 1 3 7 9 9 2 1

Ապահովագրության դեպք՝ ծանրքաշիկ ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ բեռնափոխադրումից բխող պատասխանատվության ապահովագրություն

1	Ապահովագրող	«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊՀ, ՀՀ, ք. Երևան 0001, Վաղդանանց փ. 16, հեռախոս՝ +374-11-560404, +374-12-560404, էլ. փոստ՝ info@armeniainsurance.am, կայք՝ www.armeniainsurance.am, ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 4, լիցենզիա՝ ԱՊՈ 0002 (0043), ՀՎՀՀ՝ 02574465, բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ, հմ՝ 24701005074500 00

2	Ապահովագիր				3 Ավտոտրանսպորտային միջոցների քանակ
Անվանում	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԵՎԱՏԱԿԱՆ» ՊՈ	Հեռախոս	+374 (060) 700304		4
ՀՎՀՀ	02629081	Հասցե՝	ՀՀ, Երևան, Կենտրոն Մ. ԱՎԱՍՅԱՆ 1		
Էլ. փոստի հասցե	02629081@mail.ru				
Ապահովագրին պատկանող բանկային հմ	Արդշինբանկ ՓԲԸ 24700540146500 10	ԲՄ դրա. փոփոխման ամս.	8, 25/05/2020		

4	Ապահովագրության ժամկետ	Սկիզբ՝ 01/01/2021 00:00	Ավարտ՝ 31/12/2021

5	Ապահովագրավճար առանց ԲՄ դրամի	Բոնուս	Վճարման ենթակա ապահովագրավճար
	-206060-ՀՀ դրամ	-12364-ՀՀ դրամ	-194000-ՀՀ դրամ
6	Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետներ	Միանվագ, անկանխիկ վճարում մինչև 21/12/2020	

7 Ապահովագրության պայմաններ

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները (սույն պայմանագիր, նաև՝ ԱՊՊՊ պայմաններ) ներառյալ ապահովագրական գումարի չափը, պայմանագրի ենթակա հատուցումների փաստաթղթերի և տեղեկությունների ստացման ու օգտագործման պայմանները, ապահովագրական պատահարները (դեպքերը) և սույն պայմանագրի շրջանակներում կամ դրանից դուրս ԱՊՊՊ դրդումով իրականացվող ծանուցումների կատարման կարգն ու պայմանները, սահմանված են Հայաստանի Ավտոապահովագրողների բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) իրավասու մարմնի կողմից հաստատված և Բյուրոյի՝ www.appa.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված ԱՊՊՊ ընդհանուր պայմաններով, որոնք կիրառվում են անձիցանձնորեն: ԱՊՊՊ ընդհանուր պայմանների առանձին դրույթներ կարող են փոփոխվել, վերացվել կամ լրացվել բացառապես այն ընդունած մարմնի կամ կենտրոնական բանկի կողմից՝ ձևերով սահմանված կարգով, որի մասին Ապահովագիրը տեղեկանում է Բյուրոյի վերոհիշյալ ինտերնետային կայքից, որտեղ փոփոխությունները և (կամ) լրացումները հրապարակվում են գործողության մեջ մտնելու պահից առնվազն տասն օրացուցային օր առաջ:

8	Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ

Ապահովագիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 40 րոպեի ընթացքում, իսկ ապահովագրական պատահարի հետևանքով անձնական վնասների առկայության դեպքում ԱՊՊՊ պայմաններով սահմանված ժամկետներում, այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով +374-11-560404 հեռախոսահամարով (որևէ մեկով):

9	9.1 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	9.2 ԱՊԱՀՈՎԱԳԻՐԻ ԱՆՈՒՆԻՑ
	«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊՀ-ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ԴԱՎԹՅԱՆ	ԿԱՅԳԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
	Ստորագրություն	Ծանոթացել և համաձայն եմ Բյուրոյի www.appa.am հետերնետային կայքում հրապարակված ԱՊՊՊ ընդհանուր պայմանների ներառյալ ԱՊՊՊ պայմանագրի գործողության ընթացքում [illegible] հետո ծանուցումների կիրառման կարգին, ուսումնասիրելու խնդրում [illegible] Բյուրոյից ստացված:
10	Պայմանագրի կնքման և Ապահովագրին տրման ամսաթիվ՝	07/12/2020
11	Սույն պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել ֆինանսական համակարգի [illegible] հանձնարարականի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Ապահովագրողը ֆինանսական [illegible] հարցերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Ապահովագրողը ֆինանսական [illegible] դրույթները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ հանձնարարագիր չի կնքել:	
12	Նշումներ	Կրկնօրինակ

N	5 1	3 7 9 9 2 1	ԱԿՍԻԱԳՐԻ ՀԱԿԵՆԱՑ	
1	ԱԱՀ հաշվառման համարանիշ	003FF01	ԱԱՀ տեսակ	Մարդատար
	ԱԱՀ շարժիչի հզորություն	277	ԱԱՀ օգտագործման նպատակ	Ծառայողական
	Ապահովագրավճար առանց ԲԱ դասի		Բոնուս	Վճարման ենթակա ապահովագրավճար
	-55950-ՀՀ դրամ		--3357-ՀՀ դրամ	-53000-ՀՀ դրամ
2	ԱԱՀ հաշվառման համարանիշ	001FF01	ԱԱՀ տեսակ	Մարդատար
	ԱԱՀ շարժիչի հզորություն	181	ԱԱՀ օգտագործման նպատակ	Ծառայողական
	Ապահովագրավճար առանց ԲԱ դասի		Բոնուս	Վճարման ենթակա ապահովագրավճար
	-47080-ՀՀ դրամ		--2825-ՀՀ դրամ	-44000-ՀՀ դրամ
3	ԱԱՀ հաշվառման համարանիշ	002FF01	ԱԱՀ տեսակ	Մարդատար
	ԱԱՀ շարժիչի հզորություն	181	ԱԱՀ օգտագործման նպատակ	Ծառայողական
	Ապահովագրավճար առանց ԲԱ դասի		Բոնուս	Վճարման ենթակա ապահովագրավճար
	-47080-ՀՀ դրամ		--2825-ՀՀ դրամ	-44000-ՀՀ դրամ
4	ԱԱՀ հաշվառման համարանիշ	077LL55	ԱԱՀ տեսակ	Մարդատար
	ԱԱՀ շարժիչի հզորություն	282	ԱԱՀ օգտագործման նպատակ	Ծառայողական
	Ապահովագրավճար առանց ԲԱ դասի		Բոնուս	Վճարման ենթակա ապահովագրավճար
	-55950-ՀՀ դրամ		--3357-ՀՀ դրամ	-53000-ՀՀ դրամ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՍԱՄԻՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ՍԱՄԻՆԻՑ
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ՍՊԸ-ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	ՎԱՀԱԳՆ ՀԱՄԻՏՅԱՆ ԳԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ
Ստորագրություն	Ստորագրություն
Կնքանել	Կրկնօրինակ